ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 105/10

Քաղ. Երեւան 24 մարտի 2010թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Վ.Բաբայան, Ա.Հ. Աբգարյան, Ա. Գ. Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2010թ. մարտի 24-ի նիստում (արձանագրություն N78/2) քննարկեց ՀՀ արտոնագրային հավատարմատար Է.Նահապետյանի 2009թ. դեկտեմբերի 15-ի դիմումը N 8462 «CAMБA/ՍԱՄԲԱ» ապրանքային նշանի գրանցումը չօգտագործման պատճառով Հայաստանի Հանրապետության տարածքում ԱԾՄԴ 30-րդ դասի ապրանքների համար վաղաժամկետ դադարեցնելու խնդրանքով:

Մարտի 5-ի բողոքարկման խորհրդի նիստում կոլեգիայի անդամ պրն.Ա. Բաբայանի կողմից նշվեց, որ համաձայն «Գրանդ Քենդի» Հայ-Կանադական համատեղ ձեռնարկություն ՍՊԸ-ի Ե-61 15.02.2010թ. ներկայացրած տեղեկանքի, արտադրվել է «CAMБA/ՍԱՄԲԱ» ապրանքային նշանով մակնշված պոմադկա տեսակի կոնֆետ, որի իրացման ընդհանուր ծավալը կազմում է 564 կգ:

Ելնելով վերը նշվածից կոլեգիան առաջարկեց դիմումը բավարարել մասնակիորեն, թողնել միայն հրուշակեղենի եւ քաղցրավենիքի (մասնավորապես՝ կարամել, շոկոլադ, կոնֆետներ ապռանքների համար), իսկ դասում գրանցված մյուս ապրանքատեսակների համար վաղաժամկետ դադարեցնել:

ՀՀ արտոնագրային հավատարմատար Է. Նահապետյանը արտահայտեց իր կարծիքը, այն մասին, որ ինքը խիստ կասկածում է, թե արդյո՞ք տվյալ ապրանքային նշանով կոնֆետներ արտադրվում են թե՞ ոչ, քանի որ հաշիվ-ապրանքագրերի եւ տեղափոխման բեռնագրերի առկայությունը դեռ բավարար հիմք չէ ենթադրելու, որ տվյալ «CAMБA/ՍԱՄԲԱ» ապրանքային նշանով մակնշված ապրանքը արտադրվում է: Նշեց նաեւ, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հանրապետությունում իրացվող սննդամթերքը ենթակա է համապատասխանության հավաստման, իսկ դա կարող են հավաստել միայն համապատասխան

փաստաթղթերի առկայությունը, դրանք են՝ «Տեխնոլոգիական հրահանգները», «Տեխնիկական կանոնակարգը», «Սննդամթերքի համապատասխանության հավաստումը», «Լաբորատոր փորձարկումների արդյունքները»:

«Գրանդ Քենդի» Հայ-Կանադական համատեղ ձեռնարկություն ՍՊԸ-ի ներկայացուցիչը առարկեց, հարկ համարելով տեղեկացնել, որ ներկայումս «CAMБA/ՍԱՄԲԱ» ապրանքային նշանի չօգտագործման փաստը կրում է ժամանակավոր բնույթ, քանի որ մշակվում է նոր մարկետինգային քաղաքականություն եւ սեպտեմբերից հիշյալ ապրանքային նշանը օգտագործվելու է:

Մարտի 5-ի նիստում բողոքարկման խորհուրդը հարցի քննարկումը հետաձգել էր, կողմերին տալով հնարավորություն, գտնել հաշտության եզրեր:

Մարտի 24-ի բողոքարկման խորհրդի նիստում, բողոքարկողը նշեց, որ հաշտության եզրեր չեն գտել, քանի որ ինքը չի ստացել բավավարար ապացույցներ ապրանքատեսակների արտադրման վերաբերյալ, քանի որ հաշիվ-ապրանքագրերի եւ տեղափոխման բեռնագրերի առկայությունը դեռ բավարար հիմք չէ ենթադրելու, որ տվյալ «CAMБA/ՍԱՄԲԱ» ապրանքային նշանով մակնշված ապրանքը արտադրվում է, նշեց նաեւ, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հանրապետությունում իրացվող սննդամթերքը ենթակա է համապա-տասխանության հավաստման, իսկ դա կարող են հավաստել միայն համապատասխան փաստաթղթերի առկայությունը եւ պահանջեց արտադրությունը վկայող փաստաթղթերի այդ թվում հաշիվ-ապրանքագրերի եւ տեղափոխման բեռնագրերի բնօրինակները:

«Գրանդ Քենդի» Հայ-Կանադական համատեղ ձեռնարկության ներկայացուցչի կողմից հնչեցվեց կարծիք, որ հիշյալ փաստաթղթերը հանդիսանում են արտադրական գաղտնիք եւ իրենք պարտավոր չեն դրանք ներկայացնել:

Ի պատասխան պրն. Է. Նահապետյանի այն պնդմանը, որ վարչական մարմինների պահանջով կարող են ներկայացվել փաստաթղթերի բնօրինակները, ներկայացուցիչը պատասխանեց, որ դրանք կներկայացվեն դատարան, եթե նման պահանջ լինի:

Ելնելով վերը նշվածից կոլեգիան առաջարկեց դիմումը բավարարել մասնակիորեն, թողնել միայն հրուշակեղենի եւ քաղցրավենիքի. մասնավորապես՝ կարամել, շոկոլադ, կոնֆետներ, իսկ դասում գրանցված մյուս ապրանքատեսակների համար վաղաժամկետ դադարեցնել:

Հիմք ընդունելով «Գրանդ Քենդի» Հայ-Կանադական համատեղ ձեռնարկություն ՍՊԸ-ի կողմից ներկայացված «CAMБA/ՍԱՄԲԱ» ապրանքային նշանով մակնշված 564 կգ պոմադկա տեսակի կոնֆետի արտադրման փաստը, ին չպես նաեւ ձեռնարկության ներկայացուցիչի այն հայտարարությունը, որ ապրանքային նշանի չօգտագործման փաստը կրում է ժամանակավոր բնույթ, քանի որ մշակվում է նոր մարկետինգային քաղաքականություն եւ սեպտեմբերից հիշյալ ապրանքային

նշանը օգտագործվելու է, հաշվի առնելով նաեւ այն, որ դասում ներառված են նմանատիպ ապրանքատեսակներ, որոնք՝ ըստ ներկայացուցչի, մոտ ապագայում օգտագործվելու են բողոքարկման խորհուրդը որոշեց դիմումը մերժել:

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 80-րդ կետի 2-րդ ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել «Գրանդ Քենդի» Հայ-Կանադական համատեղ ձեռնարկություն ՍՊԸ-ի (N 8462) «CAMBA/ՍԱՄԲԱ» ապրանքային նշանի վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ դիմումը եւ ապրանքային նշանի գրանցման գործողությունն ուժի մեջ թողնել:

Բողոքարկման խորհրդի որոշմանը չհամաձայնելու դեպքում հայտատուն իրավունք ունի որոշումն ստանալու օրվանից վեցամսյա ժամկետում դիմել դատարան:

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա.Ազիզյան